## «ՍՄԱՐԹՖՈՔՍ» ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### 1. «Սմարթֆոքս» սակագնային փաթեթի պայմաններ

**«Սմարթֆոքս»**-ը սակագնային փաթեթ է, որի կազմում ներառված է երկու Ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ» և «Սմարթ հեռուստատեսություն»:

**Աղյուսակ 1. «Սմարթֆոքս» սակագնային փաթեթի գնացուցակ**

| Սակագնային փաթեթ | Սմարթֆոքս 4900 | Սմարթֆոքս 6000 | Սմարթֆոքս 7000 | Սմարթֆոքս 7500 | Սմարթֆոքս 10000 |
|---|---|---|---|---|---|
| **Հիմնական ծառայություններ** | | | | | |
| Ինտերնետի արագություն | 5 Մբ/վ | 9 Մբ/վ | 20 Մբ/վ | 40 Մբ/վ | 75 Մբ/վ |
| Ներառված հեռուստաալիքների քանակ[1] | Առնվազն 100 | Առնվազն 100 | Առնվազն 100 | Առնվազն 100 | Առնվազն 100 |
| **Հավելյալ ծառայություններ** | | | | | |
| Մուլտիրում | անհասանելի[2] | անհասանելի | անհասանելի | անհասանելի | անհասանելի |
| Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք | անհասանելի | անհասանելի | անհասանելի | անհասանելի | անհասանելի |
| SmartBox Wi-Fi | անհասանելի | անհասանելի | անհասանելի | անհասանելի | անհասանելի |
| Եթերի տեսագրում (NPVR) | հասանելի[3] | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն | 5 օր | 5 օր | 5 օր | 5 օր | 5 օր |
| Առանձին հեռուստաալիքներ | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Թեմատիկ փաթեթներ | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Կինոդիտում 20 | ներառված[4] (1 անգամ) | ներառված (1 անգամ) | ներառված (1 անգամ) | ներառված (1 անգամ) | ներառված (1 անգամ) |
| **Ամսավճար** | **4900 դրամ** | **6000 դրամ** | **7000 դրամ** | **7500 դրամ** | **10000 դրամ** |

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

**«Սմարթֆոքս»** սակագնային փաթեթին հնարավոր է բաժանորդագրվել՝ բացառապես կնքելով պարտադիր ժամկետային պայմանագիր 1 տարի ժամկետով: **«Սմարթֆոքս»** սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա ընթացքում:

1.1. Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է **«Սմարթֆոքս»** սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման): Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև

---

[1] «Սմարթֆոքս» սակագնային փաթեթին բաժանորդագրվելու պահին Բաժանորդը կարող է միանալ միայն Ինտերնետ Ծառայությանը՝ հրաժարվելով Սմարթ հեռուստատեսության Ծառայության տրամադրումից: Եթե բաժանորդագրության պահին Բաժանորդը հրաժարվում է Սմարթ հեռուստատեսության տրամադրումից, ապա հետագայում նա չի կարող միանալ Սմարթ հեռուստատեսության Ծառայությանը «Սմարթֆոքս» սակագնային փաթեթի պայմաններով՝ 1 ամիս ներառված Ծառայությամբ:

[2] Եթե որևէ հավելյալ ծառայություն անհասանելի է, ապա հնարավոր չէ ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակում:

[3] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[4] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը:

**«Սմարթ Ֆոքս»** սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման դեպքում (միակողմանի կամ երկկողմանի) Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

1.2. «**Սմարթ Ֆոքս 4900**» սակագնային փաթեթի Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն, «**Սմարթ Ֆոքս 6000**», «**Սմարթ Ֆոքս 7000**», «**Սմարթ Ֆոքս 7500**», «**Սմարթ Ֆոքս 10000**» սակագնային փաթեթների Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ եռակի ավելի բարձր արագություն, պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի շարունակ, որից հետո գործում է սակագնային փաթեթի պայմաններով սահմանված հիմնական արագությունը:

1.3. **«Սմարթ Ֆոքս»** սակագնային փաթեթի շրջանակում Բաժանորդի ընտրությամբ տրամադրվող «Սմարթ հեռուստատեսության» ծառայությունը հասանելի է Բաժանորդին Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 օրացուցային ամսվա ընթացքում (ներառյալ Ծառայության հնարավոր կասեցման ժամանակահատվածը), որից հետո «Սմարթ հեռուստատեսության» ծառայությունն անմիջապես կասեցվում է Օպերատորի կողմից: Սույն կետում նշված կարգով Ծառայության կասեցման օրվանից սկսած ցանկացած պահի Օպերատորն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնելու **«Սմարթ Ֆոքս»** սակագնային փաթեթի շրջանակում տրամադրվող «Սմարթ հեռուստատեսության» Ծառայության մատուցումը և ապամոնտաժելու տվյալ բաժանորդային հասցեում տեղադրված հեռուստատեսային Սարքը, եթե մինչ այդ Բաժանորդը չի միանում Սմարթ հեռուստատեսության Ծառայությունը պարունակող որևէ սակագնային փաթեթի: «Սմարթ Ֆոքս» սակագնային փաթեթի շրջանակում 1 օրացուցային ամսվա ընթացքում ներառված հեռուստաալիքներից բացի այլ առանձին հեռուստաալիքների կամ թեմատիկ փաթեթների ձեռքբերումն իրականացվում է՝ վճարելով տվյալ ծառայությունների համար՝ ըստ սահմանված սակագների:

1.4. Եթե Բաժանորդը **«Սմարթ Ֆոքս»** սակագնային փաթեթի շրջանակում ընտրում է Սմարթ հեռուստատեսության Ծառայությունից օգտվելու հնարավորությունը, ապա նա հնարավորություն է ստանում **«Սմարթ Ֆոքս»** սակագնային փաթեթի ակտիվացման պահից սկսած 30 օրվա ընթացքում (ներառյալ Ծառայության հնարավոր կասեցման ժամանակահատվածը) Սմարթ հեռուստատեսության էկրանից ինքնուրույն 1 անգամ ակտիվացնել «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթը առանց վճարի գանձման: Սույն կետում նշված ժամանակահատվածից հետո «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթն ակտիվացնելու դեպքում Բաժանորդը վճարում է «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթի համար սահմանված վճարը: Սույն պայմաններով սահմանված կարգով ակտիվացված «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթի շրջանակում ֆիլմերի դիտումների քանակը հնարավոր է օգտագործել բացառապես կետ 1.3.-ով սահմանված 1 օրացուցային ամսվա ընթացքում, եթե Բաժանորդը մինչ սույն պայմանների կետ 1.3.-ով սահմանված կարգով «Սմարթ հեռուստատեսության» Ծառայության մատուցման միակողմանի դադարեցումը անցում չի կատարում «Սմարթ հեռուստատեսության» Ծառայություն պարունակող մեկ այլ սակագնային փաթեթի: Եթե Բաժանորդը մինչ սույն պայմանների կետ 1.3.-ով սահմանված կարգով «Սմարթ հեռուստատեսության» Ծառայության մատուցման միակողմանի դադարեցումը անցում է կատարում/միանում է «Սմարթ հեռուստատեսության» Ծառայություն պարունակող մեկ այլ սակագնային փաթեթի, ապա նոր սակագնային փաթեթի շրջանակում հնարավորություն չի ունենում առանց վճարի գանձման ակտիվացնել «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթը, սակայն նոր սակագնային փաթեթի շրջանակում շարունակում է օգտագործել

**«ՍմարթՖոքս»** սակագնային փաթեթի շրջանակում արդեն իսկ ակտիվացված «Կինոդիտում 20» ֆիլմերի փաթեթով տրամադրված դիտումների մնացորդային քանակը: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Կինոդիտում» ֆիլմերի փաթեթներից որևէ մեկը ՕԹիԹի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթը ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Կինոդիտում» ֆիլմերի փաթեթներից որևէ մեկը ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթը ՕԹիԹի հաշվի ներքո:

1.5. **«ՍմարթՖոքս»** սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Ծառայություններից օգտվելու պարտադիր ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 1.2. կետով տրամադրվող ինտերնետի կրկնապատիկ/եռապատիկ արագության տրամադրման ժամկետը:

1.6. Եթե **«ՍմարթՖոքս»** սակագնային փաթեթի Բաժանորդը դադարեցնում է բաժանորդագրությունը մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 ՀՀ դրամի չափով՝ դադարեցման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:

1.7. Եթե Բաժանորդը դադարեցնում է **«ՍմարթՖոքս»** սակագնային փաթեթը մինչև իր սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը՝ մինույն օրը բաժանորդագրվելով մեկ այլ Ծառայության/սակագնային փաթեթի 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով, չկիրառել **«ՍմարթՖոքս»** սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը:

## 2. Սակագնային փաթեթի փոփոխություն

Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.2. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի կրկնակի/եռակի արագացում և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով **«Մոնո»** սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, **«Դուո Կոմֆորտ»** սակագնային փաթեթին կամ **«Տրիո»** ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի կրկնակի/եռակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի կրկնապատկված/եռապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.2. կետով տրամադրված ինտերնետի կրկնապատիկ/եռապատիկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում: